

Շուշանիկ Կուրղինյան

Կարմիր խաչ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Անտոն . — Բանվոր
Մարթա . Անտոնի սիրած աղջիկը
Աննա . Մարթայի մայրը
Մակար . — Աննայի փոքր որդին
Պաշա . — Մարթայի ընկերուհին
Բանվորներ
Ծերուկ
Մեքենապետ
Լիզա . — Դերձակուհի
Աղջիկներ . — Դերձակուհիներ
Մեծահարուստ աղջիկ
Մեծահարուստ աղջկա հայրը
Լակեյ .
Քաղաքապահ
Հյուրեր

Ա. ԱՐԱՐ

1904 թ . ամառը, կիրակի առավոտ, Ռուսական քաղաք: Բանվորական թաղամաս: Նեղ փողոցով վազվզում են երեխաներ: Ցածլիկ ու փոքր տների առաջ, պատերի տակ նստած վիճում, խոսում են ծեր ու ջահել բանվոր-բանվորուհիներ: Աննան և Անտոնը նստած են իրենց պատի տակ:

Յատուկ Պոէմ